

ՍԻՈՆ

ԽԱ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐՈՒԹՈՒԹԵԱՆ
«Սիոն» ԽՈԼԵ ԱՐՄԵՆԻ ՄԵՐԻ, ԴԻՆԻ, ԵՎԱԿԱՆԻ, ՏԱԿԱԿԱՆԻ

“SION” ARMENIAN MONTHLY OF RELIGION, LITERATURE, PHILOLOGY.

1967 Մայիս-Յունիս Թիւ 5 - 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃՇԴ Դ Ա Ւ Մ

ԲՐՈՒ. ԽԱԶԻԿԵԱՆԻ ՀԵՌԱԳՐԻՆ ԱՌԹԻՒ

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսէն հասած սրբատառ նամակ մը կը պատուիրէ որ կանգ առնէ ամէն հակածառութիւն ձեռագրաց հարցին շուրջ։ Վեհափառ Հայրապետի հրահանգին անսալով, զեղչեցինք մամուլի տակ դրուած մեր խմբագրականը, ուր պարզած էինք Սուրբէն Արքեպիսկոպոսի գողութիւններու յիսնամեայ շարքը եւ զայն շահագործողներու անպարկեցութիւնները։ Կը բաւականանք չըատարակելով հետեւեալ ճշումը միայն։

Հայ եւ օտար մամուլին մէջ անողոք չարաշահութեան ենթարկուեցաւ վերջերս Մաշտոցի Անուան Պետական Մատենադարանի Տնօրէն Բրօֆ. Լեւոն Խաչիկեանի մէկ հեռագիրը ուղղուած «Նայիրի»ի խմբագրին։ Հեռագիրը կ'ըսէ յստակօրէն։

«Երուաղէմում եղել եմ 1966 Փետր.-Մարտ ամիսներին։ Թորոս Ռուզինի վահառքի տարուած ձեռագրերը Չեմ Տեսել։

Գանձատանը պահուող ձեռագրերից տեսել եմ Կեռան թագուհու ոսկեպատ աւետարանը եւ երեք այլ ձեռագրեր որոնք յափրշտակուած ձեռագրերից 26ն։ Սօրպի ընկերութեան հրատարակուած զարալոկի մէջ նկարագրուած 23 ձեռագրերից 19ը հաստատապէս նկարագրուած են նաև Հայրիկ Արքեպիսկոպոսի 1965 Փետրուարի 16 ամսաթուով թուագրուած գանձատանը պահուող ձեռագրերի գոյքամատեանի մէջ, որոնց շարքին նաև Վաճառքի համուած Ռուլինի երկու ձեռագրերը։

Կ'ընդգծենք երեք իրողութիւններ։

Բրոֆ. Լ. Խաչիկեան, ինչպէս ամէն այցելու որ առիթը ունեցած է գանձատան առարկաները տեսնելու, ՏԵՍԱՆ է չորս ձեռագրեր միայն, որոնք են.

(1) Կեռան թագուհիի հռչակաւոր Աւետարանը, Նշանեան ցուցակին մէջ նկարագրուած հետեւեալ կերպով.

Գանձատան
թուահամար

Չեռագրաց

Մատենադարանի
թուահամար

Խանօքութիւն

8

2563

Ա.Ի.Ե.ՏԱ.ՐԱՆ ոսկիապատ մագաղաք,
զբիչ՝ Աւետիս քահանայ, ստացող՝
Կեռան Թագուհի, ի վերջն կետն
Թագաւորի եւ Կեռան Թագուհիոյ զա-
ւակաց նկարներով։

(2) Յարութիւն Զուղայեցիի Աւետարանը, Նոյն ցուցակին
մէջ նկարագրուած այսպէս.

Գանձատան
թուահամար

Չեռագրաց


Մատենադարանի
թուահամար

Խանօքութիւն

21

2576

Ա.Ի.Ե.ՏԱ.ՐԱՆ ոսկիապատ եւ ակունք-
ներով, մագաղաք, յիշատակ Զու-
ղայեցի մահեսի Յարութիւնի
ՈՒՄԺԴԳ - 1764:



(3) Յովհաննէս Կորոս Պատրիարքի Աւետարանը, նկարագրուած այսպէս.

Գանձատան թուահամար	Զեռագրաց
	Մատենադարանի թուահամար

114	2669	Ահեսլը մագաղաք, ոսկիապատ, զրիչ եւ ծաղկող՝ Սերաստացի տի- րացու թարսեղ եւ Յակոբ, յիշատակ կոլոտի ՌՃԶԵ - 1738:
-----	------	---

(4) Գրիգոր Շղմայակիր Պատրիարքի Աւետարանը, նկարագրուած այսպէս.

Գանձատան թուահամար	Զեռագրաց
	Մատենադարանի թուահամար

92	2647	Ահեսլը մագաղաք, ոսկիապատ քելքիարի, զրիչ՝ Աստանացի Ղափ- լան յԱլաշխան, ի վերջն Շղրայակիրի եւ կոլոտի պատկերներով նկարուած ի ԲԿ. ՌՃԿԶ - 1717, ՌՃԾԹ - 1710:
----	------	--

Այս չորս ձեռագիրները, որոնք իրենց կազմով, ընդհանուր վիճակով եւ արուեստի այլազանութեամբ կը ներկայացնեն լաւագոյն նմոյշները գանձատան մէջ պահուող Աւետարաններուն, կը գործածուին նաեւ մեծ տօներուն իրրեւ զարդարանք խորաններու։ Միանգամ ընդ միշտ ըստնք որ ասոնք ԶԵՆ, անհետացուած գանձատունէն, մնացած են ու կը մնան Ա. Յակոբի Եկեղեցւոյն մէջ, ցոյց տրուած են եւ պիտի շարունակուին ցոյց տրուիլ յարմար առիթներու։ Այս չորս ձեռագիրները ԶԿԱՆ Սաթրպիէն բերուած 23-ին մէջ։

Բրոֆ. Լեւոն Խաչիկեան տեսած է ցուցակ մը, որ է.

Ց Ո Ւ Ց Ա Կ

Ա. ՅԱԿՈԲԱՅ ԳԱՆՉԱՏԱՆ ՄԵԶ
ՊԱՀՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԱՅ

Կազմեց

Մեսրոպ Վ. Բդ. Նշանեան

(1907 Սեպտ. 3)

Հրատարակեց

Հայրիկ Արքեպս. Ասլանեան

Լուսարարապետ Ա. Արոռոյ

(16 Փետրուար 1965)

16 էջերէ բաղկացած այս ցուցակէն տպուած են 25 օրինակներ: Մեսրոպ Վ. Բդ. Նշանեան (Լուսարարապետ եւ ապա՝ Պատրիարք Ս. Աթոռոյ) պատրաստած է զայն 1907-ին, ոչ իրբեւ ցուցակ, այլ պարզ ցանկ մը, գանձատան գործածութեան համար: Հայրիկ Արքեպս. Ասլանեան, Ս. Աթոռոյս Լուսարարապետը, ՏՊԱԾ է միայն զայն հարազատօրէն, նոյնիսկ սխալներով, որ սպրդած էին այնտեղ ժամանակին: Լուսարարապետը հարկ չէ զգացած ստուգել ձեռագիրները, որովհետեւ իր նպատակը եղած է իր նախորդներէն մէկէն մնացած արձանագրութիւն մը կորուստէ փրկել միայն եւ ոչ թէ գիտական աշխատանք մը հրատարակել: Վերեւ մէջը բրուած չորս Աւետարաններու մասին եղած արձանագրութիւնները կը հաստատեն արգէն թէ ձեռագիրներու նկարագրութիւնը շատ հեռու է մանրազնին եւ գիտական աշխատանք մը ըլլալէ: Իսկ այն իրողութիւնը որ 25 օրինակ միայն տպուած է ցուցակէն՝ բաւական պերճախօս ապացոյցն է հրատարակութեան նպատակի մասին: Եղածը «գոյքամատեան» մըն է, հեռագրին իսկ բառերով:

Ցոյց տալու համար վարձկան «Նայրիկ»ներու եւ «Նոր Աշխարհ»ներու աճպարարութեան արուեստին որակը, կը հրատարակենք երկու նամակներ: Լուսարարապետ Հայրիկ Արքեպիսկոպոսի 11 Մարտ 1967 թուակիր նամակը, ուղղուած Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսին, իսկ միւսը՝ Բրօֆ. Լեւոն Խաչիկեանի 28 Մարտ 1967 թուակիր պատասխանը:

11 Մարտ 1967

Նորին Ս. Օծուրին**Տ. Տ. Վազգեն Ա.****Մայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս****Ամենայն Հայոց****Ս. Էջմիածին****Վեհափառ Տէր,**

Ս. Արռողյա Գրչագիրներու անյատացման առնչութեամբ
միտքերու մէջ շփոքութիւն մը յառաջացած ըլլալուն՝ կարգ մը
գեղասէր յարգելի անձնաւորութեանց՝ մասնաւորապէս Փրօֆ.
Լ. Խաչիկեանի, պարտք կը համարիմ տալ հետեւեալ լուսարա-
նութիւնը:

Ս. Արռո իր գտնուած միջոցին իր Յարգարժան ընկերոջ,
Ս. Արեւշտեանի հետ, իրենց մասնաւոր խնդրանելին վրայ, Գան-
ձատան չորս գրչագիրները ոսկեապատ և ականակուռ կողքերով,
որոնք, առհասարակ մեզի համար սովորութիւն դարձած՝ երե-
ւելի եւ մեծ անձնաւորութեանց ցոյց կը տրուին, ցոյց տուի ի-
րենց եւս եւ հետեւեալներն են:—

Կեռան Թագուհիի Աւետարանը,

Շղբայակրի Աւետարանը,

Կողուտ Յովհաննէս Պատրիարքի Աւետարանը,

Զուղայեցիի Աւետարանը:

Կը խորիիմ թէ Զերդ Սրբութիւնը կը յիշէ որ յիշեալ Աւե-
տարանները Ս. Յակոբի Մայր Տաճարին մէջ, ցոյց տրուեցան
նաև Զերդ Սրբութեան՝ 1963-ին:

Յարգարժան Փրօֆ. Լ. Խաչիկեանի մտքին մէջ կը մտա-
ծենիք թէ այն տպաւորութիւնը մնացած է որ ատիկա գործն է Թո-
րոս Ռուլինի, բայց, յիշեցնել կ'ուզենք տալ իրեն թէ երբ միասին
յիշատակարանը կարդացինք՝ երեւան եկաւ թէ գրիչը Ահե-
ՏՈՒՄՆ է որ կ'ըսէ «Հմտագոյն անձանց յանձնեալ ծաղկում
գրոյն» եւ Փրօֆ.ը աւելցուց թէ՝ ծաղկումի այդ գործը կրնայ
«Ռուլինի կամ Պիծակի լինի». այդ Աւետարանը եւ միւս երեքը
կան եւ յանախ ցոյց կը տրուին այժմ եւս երեւելի անձնաւորու-
թեանց:

1961 Մարտ 10-ին, երբ լուսարարապետութեան պաշտօնը
ստանձնեցի օրինաւորապէս եւ առի Ս. Գլխադրէն Ս. Մինասի

քանալին, այդ օրեն ի վեր ոչ զանգուածային եւ ոչ մասնակի թիւվ ոչ մէկ ձեռագիր դուրս հանուած է զանատունէն, բացի վերոյիշեալ չորսէն:

Այս լուսաբանութիւնը տալ հարկադրուեցայ որովհետեւ մտքերու մէջ շփորութիւն յառաջ եկած է ԿԵՌԱՆԻ Աւետարանի ԳՐԻՉՔ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ նկատելու վարկածին, մասնաւորապէս Յարգարժան Փրօֆ. Լ. Խաչիկեանի կողմէ եւ ապահովենելու թէ այդ ոսկեպատ եւ հրաշալի գանձք կը պահէ իր արժանի տեղը մեր Գանձատան մէջ այժմ եւ կայ յապահովութեան:

**Ամենախոնարհ յարգանաց հաւաստեօֆ
եւ որդիական սիրով**

Մատչիմ ի համբոյր Ս. Օծութեանդ Աջոյն
ու բարձր Պատրիարքական Հայոց Եկեղեց Առաջնորդութիւնի
ժամանակակից ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՈՍ. ԱՍԼԱՆԵԱՆ
ՀՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Ս. ԱԹՈՌՈՅՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅ-ՄԻՒՆԻՍՊԻՉՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱԽԵՂԵՐ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒԱՆ

ՀԵԽ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 09 / 53

Երևան 9. Լենինի պող. № 111

28 Մարտ 1967

Հայրիկ Արքեպս. Ասլանեան

Լուսաբարապետ Սրբոց Յակոբեանց Վանքի

Գերաշնորհ հայր

Ծանօթացայ Նորին Ս. Օծութիւն Վազգէն Ա-ին գրած Զեր
11 Մարտ 1967 թուակիր նամակի բովանդակութեանը:

Երուսաղէմի 23 ձեռագրերի Լոնդոնում անուրդով վաճառ-
ւելու լուրը, որ ստացուեց այստեղ Փետրուարի 22-ին, մեծապէս
յուզեց հասարակական կարծիքը: Առվետական Միութեան պաշ-

տօնական օրգան «Խզվեստիա» թերթում (եւ այլ կենտրոնական պարբերականներում) հրատարակուեցին այդ թերթի Լոնդոնիան թղթակցի ընդարձակ յօդուածները ձեռագրերի մասին, եւ Մաշտոցեան Մատենադարանը Հայաստանի եւ այլ հանրապետութիւնների Հայ եւ օտարազգի գրասէրներից ստացաւ բազմաթիւ նամակներ ու հարցումներ վահառուող ձեռագրերի բովանդակութեան, արժեքի եւ յարակից հարցերի մասին։ Մեզ դիմեցին նաեւ Մուկուայում գտնուող օտարերկրեայ թերթերի թղթակիցներ ու այլ անձիններ։ Բոլոր պաշտօնական հարցումներին, այն մասին թէ ես կամ Ս. Արեւշատեանը տեսն՝ ենի արդեօֆ վահառուող ձեռագրերից որեւէ մէկը 1966 թ. Երուսաղէմ կատարած մեր այցի ժամանակ, տրուել է բացասական պատասխան — ՄԵՆՔ ԶԵՆՔ ՏԵՍԵԼ ԱՅԴ ԶԵՌԱԳՐԵՐԸ^(*)։

Սակայն մինչեւ «Սոտրի» ընկերութեան ամբողջական կատալոգի ստացումը (ուր տպագրուած են նաեւ գունաւոր եւ միագոյն արտաստութիւններ որոշ մանրանկարներով) մեզ համար պարզ չէր, թէ գողացուած ձեռագրերից Կեռան թագուհու անտարան կոչուածը ո՞րն է Զեր գանձատանը պահուող 2 ձեռագրերից՝ այն, որ գրանցուած է 2660 համարի տակ (գանձատուն № 105) եւ պարունակում է, ի թիւս այլ մանրանկարների, նաեւ Լեւոն թագաժառանգի ու Կեռանի պատկերները, թէ[»] № 2563-ը (գանձատուն № 8), որի մէջ նոյնական նոյն այդ անձնաւորութիւնների (Լեւոն թագաւորի եւ Կեռան թագուհու) եւ նրանց 5 զաւակների պատկերը։ «Սոտրի» կատալոգի ստացումով այդ հարցը աւելի յատակ դարձաւ մեզ համար։ պարզ է, որ մենք, Զեր սիրալիր թոյլտութեամբ, տեսն ենի № 2563(8) ոսկեպատ աւետարանը, որի մանրանկարները մի քանի մասնագետներ նոյնական վերագրում են Թորոս Ռոսլինին։

Գերաշնորհ հայր, անիրաժեշտ եմ համարում յայտնել Զեզ, որ Լոնդոն տարուած 23 ձեռագրերից 19-ի Սրբոց Յակոբեանց Վանքի Մատենադարանի եւ Գանձատան համարները դիրութեամբ հնարաւոր եղաւ որոշել 1965 թ. Փետրուարի 16-ի ամսաթուով Զեր հրատարակած «Յուցակ Ս. Յակոբայ Գանձատան մէջ պահուած ձեռագրաց» խորագրով գոյքամատեանի ընձեռուած տուեալներով։

Այդտեղ համառօտ թուարկուած 130 ձեռագրերից № 1-115ի նկարագրութիւնները ըստ ցուցակի կազմել է 1907 թ. Մեսրոպ Վրդ. Նշանեանը, իսկ յաջորդ ձեռագրերինը (№ 116-130)՝ Լուսարարապետ Մեսրոպ արքեպիսկոպոսը՝ 1937 թուականին։ Սակայն տրամարանական էր կարծել եւ կարծում էինք,

(*) Բնողջ ձուումը Ամբողջութեան կողմէ։

որ գոյքամատեանը հրատարակելու ժամանակ (1965 թ. Փետրուարի 16),՝ բոլոր ձեռագրերը եղել են տեղում եւ սովորուել Չեր կողմից:

Հաւանարար Չեր կը յաջողուի պարզել, թէ ինչ նաև ապարահով լոնդոն տարուեցին ձեռագրերը եւ միջոցներ կը գտնենք կանխելու մեր ազգային սրբութիւնների առեւանգման փորձերը: Մենք բոլորս գոհունակութեամբ ընդունեցինք ձեռագրերի վերադարձան ուրախ լուրը եւ այդ առքի շնորհաւորում ենք Չեր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեանը:

Յարգանքներով

Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն,
Պրոֆ. Լ. ԽԱԶԻԿԵԼՆ

*

Այս առթիւ, կը դժուարանանք լոել նաեւ այլ անձշղութեան մը մասին, ըստ որուն՝ իրը թէ ամերիկացի գիտնական Բրօֆ. Ճոն Բարսուէլ տեսած է Սաթրպիի ցուցակի թիւ 23 Աւետարանը: Բրօֆ. Ճոն Բարսուէլի տեսածը վերեւ յիշուած չորս Աւետարաններէն երրորդն է, թիւ 2669, Կոլոտի Աւետարան կոչուածը, որուն նկարագրագումը բացարձակապէս նոյնն է Սաթրպիի թիւ 23-ով նկարագրուածին հետ: Նոյն արուեստով նկարագրագուած զոյդ Աւետարաններ են ասոնք, որոնք կը տարբերին միայն իրենց յիշատակարաններով: Առաջինը, որ առ հասարակ ցոյց կը տրուի, ունի Կոլոտ Պատրիարքի յիշատակարանը եւ այդ պատճառաւ ծանօթ է իրեւ Կոլոտ Պատրիարքի Աւետարան: Երկրորդը յիշատակարան չունի: Բրօֆէսօրին տեսածը առաջինն է, իսկ երկրորդը՝ Սաթրպիի ցուցակին թիւ 23-ը: Շփոթութեան մը զոհն է Բրօֆ. Ճոն Բարսուէլ, որը կ'օգտագործուի նոր շփոթութիւններ ստեղծելու համար:

Թերթերու մէջ հրատարակուած բազմաթիւ անձշղութիւնները եւ անոնցմէ հանուած եղբակացութիւնները առ հասարակ կը ծագին դէպէրու անտեղեակութենէն:

Հոււեցաւ որ Վեհափառ Հայրապետը մտած է գանձատուն եւ տեսած բոլոր ձեռագիրները: Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Ս. Յակոբայ Տաճարին մէջ տեսաւ ոչ թէ գանձատունը, ուր Պատրիարքն անգամ չի մտներ, ըստ աւանդութեան, այլ՝ գանձատունէն հանուած առարկաներ եւ ի շարս անոնց՝ վերեւ նկարագրուած չորս Աւետարանները, որոնք ոչ մէկ կազ ունին Սաթրպիի մօտ վաճառքի հանուածներուն հետ:

Գանձատունէն տարուած ձեռագիրները վերջին տեսնողը

Էղած է 1952ին Օր. Սիրաբիի Տէր Ներսէսեան, որ գանձատոն պահուող 130 ձեռադիրներին ուսումնասիրած եւ նկարած է 61-ը:

Ասոնք են, ըստ տոմարին մէջ պահուած Լուսարարապետի և Օր. Սիրաբիի Տէր Ներսէսեանի թողած արձանագրութիւններուն՝

Թիւ 2556, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2571, 2583, 2587, 2588, 2589, 2593, 2596, 2599, 2601, 2602, 2604, 2607, 2608, 2611, 2612, 2614, 2617, 2618, 2619, 2620, 2623, 2624, 2625, 2627, 2630, 2631, 2634, 2636, 2637, 2647, 2649, 2650, 2660, 2661, 2663, 2665, 2668, 3624, 3625, 3627, 3628, 3629, 3630, 3631, 3632, 3633, 3634, 3635, 3636:

Օր. Տէր Ներսէսեանի գիրով պահուած ցանկին մէջ յիշատակուած է նաև թիւ 2670 ձեռադիր մը, սակայն գանձատան ցուցակը նման թիւ չի պարունակեր:

Ըստ նոյն տոմարին, Վեհափառ Կաթողիկոսի այցելութեան առթիւ գանձատունէն հանուած իրեղէններն են հետեւեալները.

Կանաչ եւ կապոյտ թագ իւր սարօֆ
Թիւ 35 եւ 141, 3, 8, 5 եւ 9 Զարխեր
Լէզէն եւ ըպրըխ, վարդեջուրի աման, բաժակաման
14 կարմիր խաչանիշ շուրջառներ
Եմիփորոն (կանաչ) եւ փորուրար (կանաչ)
Ռափի հինգ խաչեր եւ մէկ նախանչ
Հողաքափ երկու զոյգ (կանաչ, կարմիր)
Խալիչայի չարխ
5 եմիփորոն եւ 5 փորուրար
Խսահակի թագ իւր սարօֆ
Երկու զոյգ կանաչ եւ մէկ զոյգ ներմակ շապիկներ
Մէկ թիւլքէրի խաչ եւ մէկ արծարեայ ափսէ մեծ
Ամպհովանի եւ խաչվառ ծանրագին
20 ռափի արծարապատ Աւետարաններ
Հինգ գոտի եւ Գլխադրի արծարեայ աշտանակներ եւ
պատկեր
Խաչվերացի արծար աշտանակներ
Չորս ոսկի կանքեղ՝ մին մեծ եւ երեքը փոքր
Մէկ նախանչ
Երկու ձեռագործ եւ երկու ոսկիապատ Աւետարաններ
Երկու արծար մեծ ափսէ
Մէկ ապակիէ եւ արծարապատ սրուակ
Մէկ շուրջառ թիւ 6
Արծիւ - խաչվառ եւ Գլխադրի պատկեր

Այս առթիւ եւ փակելու համար ճշգումներու շարքը, յայտնենք նաեւ թէ ամբաստանեալէ ամբաստանողի հովեր ստանձնող եւ միջազգային ու ազգային մամուլին մէջ աղմկողներ, թէեւ իրենց վիժած երազներու ցաւը՝ կ'ամոքեն, սակայն չե՛ն անդրադառնար թէ Պատրիարքարանս կը զնեն նոր կացութիւններու առջեւ՝ նո՛յն դանձատան պահպանման տեսակէաէն:

Չենք ուզեր աւելին ըսել, այլ միայն յուսալ որ պարզ իրականութիւնները, որոնք անհիմն ամբաստանութիւններու և թերթի մունեստիկներու կողմէ աղմուկի մէջ խեղզուեցան՝ ի լոյս պիտի բերուին, յամօթ եւ ի շփոթութիւն բազմաց:

ԽՄԲ.

Ս. ՅԱԿՈԲԱՅ ԳԱՆՁԱՏՈՒՆԵՆ

ՅԱԿՈԲԻԻՆ ՊԱԿՍՈՂ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ

Գալաճառամ
բուհամամար

Չեղապաց
Մասնաց պատմի
բուհամամար

Դամօրուրիւն

4	2559	Ա.ՍՏՈՒԱԾԱՇՈՒԽԵԶ արծաթապատ, մագաղաք, գրիչ՝ Ամբեցի Տէր Միքայէլ եւ Մինաս Վարդապետ, յերուսաղէմ, ՌՀԱ. - ՌՀԱ. = 1622 - 32:
20	2575	Ա.ԻԵՏՍՈՒՐԱՆ ոսկիապատ, մագաղաք եւ ակունքներով, ստացող՝ կոլոտ Յովհաննէս Պատրիարք ի Կ. Պոլիս:
36	2591	Ա.ԻԵՏՍՈՒՐԱՆ արծաթապատ, մագաղաք, գրիչ՝ Աստուածատուր Դափիր:
71	2626	Ա.ԻԵՏՍՈՒՐԱՆ արծաթապատ, մագաղաք, բարերով, ստացող՝ Մահմեսի Ամիրազիզ Բաղիշեցի, ՌՀԵ. = 1626: